ք.Աբովյան “20” մայիսի 2013թ.

1. Բաժանորդը, կնքելով մեկ տարի գործողության ժամկետով լայնաշերտ ինտերնետի ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) համար Բաժանորդային պայմանագիր (այսուհետ՝ Ժամկետային պայմանագիր), առաջին կամ առաջին երկու ամսվա ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար և ստանում է Wi-Fi սարքի (այսուհետ՝ Սարք) անվճար օգտագործման իրավունք:*
2. Բաժանորդն իրավունք ունի Ժամկետային պայմանագիր կնքելիս ընտրել առաջարկվող տարբերակներից (այսուհետ՝ Տարբերակ) որևէ մեկը.
   Տարբերակ 1. Առաջին կամ առաջին երկու ամսվա ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար և ստանում է Սարքի անվճար օգտագործման իրավունք,*
   Տարբերակ 2. Առաջին կամ առաջին երկու ամսվա ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար:*
3. Սարքի անվճար օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև Ժամկետային պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև շարունակվում են ինտերնետային ծառայությունների մատուցման հարաբերությունները և Սարքն անհրաժեշտ է Բաժանորդի կողմից նման ծառայությունները ստանալու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև ինտերնետային ծառայությունների մատուցման հարաբերությունների դադարեցման դեպքում Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
4. Այլ (այդ թվում՝ ընդհանուր) պայմաններով Ծառայություններից օգտվող Բաժանորդները նույնպես կարող են անցում կատարել Ժամկետային պայմանագրի և Ծառայություններից օգտվել սույն պայմաններով:
5. Եթե Բաժանորդը ցանկանում է վաղաժամկետ լուծել Ժամկետային պայմանագիրը, ապա պարտավոր է մինչև պայմանագրի լուծումը Օպերատորին տրամադրել հրաժարագին, որի չափը հավասար է Ծառայությունների առաջին կամ առաջին երկու ամսվա վճարի (եթե առաջին երկու ամիսն է ստացել անվճար) և Ժամկետային պայմանագրի գործողության ժամանակահատվածի համար Սարքի օգտագործման իրավունքի վճարի (ըստ բաժանորդագրության պահին գործող սակագնի) հանրագումարին, եթե Բաժանորդն ընտրել է սույն պայմանների 2-րդ կետում նշված Տարբերակ 1-ը, իսկ եթե ընտրել է Տարբերակ 2-ը, ապա տրամադրում է հրաժարագին Ծառայությունների առաջին կամ առաջին երկու ամսվա վճարը (եթե առաջին երկու ամիսն է ստացել անվճար): Եթե Բաժանորդը հրաժարվում է Ծառայությունների անվճար տրամադրված ամիսների ընթացքում, ապա տրամադրում է հրաժարագին մինչև լուծման դիմումի ներկայացման օրը մատուցված Ծառայությունների և Ժամկետային պայմանագրի գործողության ժամանակահատվածի համար Սարքի օգտագործման իրավունքի վճարի (ըստ բաժանորդագրության պահին գործող սակագնի) հանրագումարի չափով, եթե Բաժանորդն ընտրել է սույն պայմանների 2-րդ կետում նշված Տարբերակ 1-ը, իսկ եթե ընտրել է Տարբերակ 2-ը, ապա տրամադրում է հրաժարագին մինչև լուծման դիմումի ներկայացման օրը մատուցված Ծառայությունների չափով: Ժամկետային պայմանագիրը համարվում է լուծված հրաժարագինը, ինչպես նաև մինչ այդ պահը մատուցված Ծառայությունների արժեքն Օպերատորին վճարելու և Ժամկետային պայմանագրի լուծման մասին դիմումը ներկայացնելու պահից:

6. Եթե Ժամկետային պայմանագիրը կնքելիս Բաժանորդն իր ցանկությամբ չի օգտվում Սարքի անվճար օգտագործման իրավունքից, ապա Ժամկետային պայմանագրի գործողության հետագա ընթացքում այլևս չի կարող օգտվել նշված արտոնությունից:
7. Ժամկետային պայմանագրի գործողության ընթացքում Բաժանորդը հնարավորություն ունի անցում կատարելու Ժամկետային պայմանագրի սկզբնական Սակագնային փաթեթից ավելի մեծ կամ փոքր արժեքով Սակագնային փաթեթի: Ժամկետային պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում սույն պայմանների 5-րդ կետում նշված հրաժարագնի հաշվարկման հիմք է ընդունվում այն Սակագնային փաթեթի արժեքը, որից անվճար օգտվել է Բաժանորդը առաջին կամ առաջին երկու ամսվա ընթացքում:
8. Ժամկետային պայմանագրի գործողության ընթացքում Բաժանորդի կողմից ցանկացած Սակագնային փաթեթին անցում կատարելու դեպքում նրա կողմից կնքված Ժամկետային պայմանագիրը մնում է ուժի մեջ և համարվում է Ժամկետային պայմանագիր տվյալ Սակագնային փաթեթի համար, անկախ այն հանգամանքից, թե Բաժանորդը որ Սակագնային փաթեթին է անցում կատարել, ինչպես նաև բոլոր Սակագնային փաթեթների համար Ժամկետային պայմանագրի գործողության ընթացքում գործում է սույն պայմանների 5-րդ կետում նշված հրաժարագինը: Եթե բաժանորդը միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու և ավելի տարբեր Սակագնային փաթեթներից, ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած Սակագնային փաթեթների ամսավճարների համամասնությամբ:
9. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը՝ Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով: Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Ժամկետային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամակահատվածի տևողությամբ:
10. Գործընկեր կազմակերպությունների այն աշխատակիցներն, ովքեր օգտվում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ տնօրենի 15.01.2013թ. թիվ 001-01/13-Հ3-Լ հրամանով սահմանված պայմաններից, չեն կարող միաժամանակ օգտվել սույն պայմաններով սահմանված արտոնություններից:
11. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից Ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:
12. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով:

* Առաջին երկու ամսվա ընթացքում Ծառայություններն անվճար ստանալու պայմանները հրապարակված են Օպերատորի վեբ կայքում: